

Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների տեղեկատվական ամփոփագիր

(Ուժի մեջ է՝ 15.01.2026թ.-ից)

1. Բանկի կողմից առաջարկվող ավանդատեսակները
 - [«Դասական» ավանդ](#)
 - [«Մանկական» ավանդ](#)
 - [«Էվոկա Online» ավանդ](#)
2. **[Ավանդների ներգրավման պայմանները](#)**
3. [Ավանդների տոկոսագումարների հաշվարկման և վճարման կարգը](#)
4. [Ավանդային հաշվի վերաբերյալ տրամադրվող տեղեկատվություն](#)
5. [Երաշխավորված ավանդների չափերը](#)
6. [Ավանդատուներին անվճար տրամադրվող վճարային քարտեր](#)
7. [Տոկոսագումարների հաշվարկման ներկայացուցչական օրինակներ](#)
8. [Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերության չափը](#)

1. Բանկի կողմից առաջարկվող ավանդատեսակները

1.1. «Դասական» ավանդ.

Նվազագույն գումար և արժույթ	Տոկոսների վճարման եղանակը	Ընդունման ժամկետներն ըստ օրերի քանակի						
		31 - 90 օր	91 - 180 օր	181 - 270 օր	271 - 365 օր	366 - 549 օր	550 - 730 օր	731 - 1825 օր
100,000 ՀՀ դրամ	Տոկոսները ժամկետի վերջում վճարմամբ	4.50 %	6.00 %	7.00 %	8.00 %	9.50 %	10.00 %	10.50 %
	Ամենամսյա տոկոսների վճարմամբ	4.00 %	5.50 %	6.50 %	7.50 %	9.00 %	9.50 %	10.00 %
	Տոկոսները եռամսյա վճարմամբ	-	5.50 %	6.50 %	7.50 %	9.00 %	9.50 %	10.00 %
200 ԱՄՆ դոլար	Տոկոսները ժամկետի վերջում վճարմամբ	0.75 %	2.00 %	2.50 %	3.00 %	4.00 %	4.50 %	5.00 %
	Ամենամսյա տոկոսների վճարմամբ	0.50 %	1.75 %	2.25 %	2.75 %	3.75 %	4.25 %	4.75 %
	Տոկոսները եռամսյա վճարմամբ	-	1.75 %	2.25 %	2.75 %	3.75 %	4.25 %	4.75 %
200 Եվրո	Տոկոսները ժամկետի վերջում վճարմամբ	0.35 %	1.00 %	1.50 %	1.75 %	2.00 %	2.50 %	3.00 %
	Ամենամսյա տոկոսների վճարմամբ	0.25 %	0.75 %	1.25 %	1.50 %	1.75 %	2.25 %	2.75 %
	Տոկոսները եռամսյա վճարմամբ	-	0.75 %	1.25 %	1.50 %	1.75 %	2.25%	2.75 %
30,000 ՌԴ Ռուբլի	Տոկոսները ժամկետի վերջում վճարմամբ	4.00 %	5.00 %	5.25 %	5.50 %	6.00 %	-	-
	Ամենամսյա տոկոսների վճարմամբ	3.75 %	4.75 %	5.00 %	5.25 %	5.75 %	-	-
	Տոկոսները եռամսյա վճարմամբ	-	4.75 %	5.00 %	5.25 %	5.75 %	-	-

- 1.1.1. Ավանդն ընդունվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից, ինչպես Բանկի գործունեության վայրում, այնպես էլ՝ «EvocaTouch» կամ «EvocaOnline» հեռակառավարման համակարգերի միջոցով:
- 1.1.2. Ավանդատուն կարող է համալրել (ավելացնել) իր Ավանդի գումարը սկսած նվազագույնը 40 000 ՀՀ դրամից, 100 ԱՄՆ դոլարից, 100 Եվրոյից կամ 10 000 ՌԴ ռուբլուց:
- 1.1.3. Ավելացման հնարավորությամբ ավանդ ներդնելու դեպքում ՀՀ դրամով ավանդների համար սահմանվում է վերոհիշյալ սանդղակի տոկոսադրույքներից 0.5 %-ով պակաս տոկոսադրույք, իսկ ԱՄՆ դոլարով, Եվրոյով և ՌԴ ռուբլով ավանդների համար սահմանվում է վերոհիշյալ սանդղակի տոկոսադրույքներից 0.25 %-ով պակաս տոկոսադրույք: Կատարված բոլոր համալրումների հանրագումարը չի կարող գերազանցել Ավանդի ներդրման սկզբնական գումարը: Ավանդային պայմանագրի գործողության վերջին 3 (երեք) ամիսների ընթացքում Ավանդի գումարի համալրում չի թույլատրվում:
- 1.1.4. Ավանդի գումարի մասնակի նվազեցում չի թույլատրվում:
- 1.1.5. Ավանդատուի պահանջով ավանդային պայմանագիրը ժամկետից շուտ լուծելու դեպքում Բանկն իրականացնում է Ավանդի տոկոսագումարների վերահաշվարկ հետևյալ դրույքաչափերով՝

Ավանդի արժույթ	Տարեկան տոկոսադրույք ըստ ժամկետների	
	Մինչև 365 օր	366 - 1095 օր
ՀՀ դրամ	0.50 %	8.50 %
ԱՄՆ դոլար	0.10 %	3.50 %
Եվրո	0.10 %	1.50 %
ՌԴ ռուբլի	0.10 %	5.00 %

1.2. «Մանկական» ավանդ

Ներգրավվող գումարների սահմանաչափեր ըստ արժույթի	Տարեկան տոկոսադրույք
100 000 ՀՀ դրամ	9.50 %
250 ԱՄՆ դոլար	4.50 %

- 1.2.1. Ավանդն ընդունվում է ֆիզիկական անձանցից, հոգուտ երեխաների Ավանդ ներդնելու պայմանով 2 տարուց մինչև երեխայի 18 տարին լրանալը:
- 1.2.2. Որպես ավանդատու կարող են հանդես գալ ինչպես երեխաների օրինական ներկայացուցիչները (ծնողները, խնամակալները), այնպես էլ երրորդ անձիք:
- 1.2.3. Տոկոսագումարների վճարումը կամ կապիտալացումը իրականացվում է ամենամյա պարբերականությամբ:
- 1.2.4. Ավանդը կարող է համալրվել (ավելացվել)՝ սկսած նվազագույնը 40,000 ՀՀ դրամից կամ 100 ԱՄՆ դոլարից: Մեկ ամսվա ընթացքում համալրումների ընդհանուր գումարը 5,000,000 ՀՀ դրամը կամ 10,000 ԱՄՆ դոլարը գերազանցելու դեպքում անհրաժեշտ է Բանկի Վարչության որոշումը: Ավանդային պայմանագրի գործողության վերջին 3 (երեք) ամիսների ընթացքում Ավանդի գումարի համալրում չի թույլատրվում:
- 1.2.5. Ավանդի գումարի մասնակի նվազեցում չի թույլատրվում:
- 1.2.6. Հոգուտ երեխաների բացված ժամկետային ավանդները տնօրինվում են երեխայի օրինական ներկայացուցիչների կամ երրորդ անձանց կողմից, օրենքով նախատեսված դեպքերում մինչև երեխայի 18 տարին լրանալը:
- 1.2.7. Կնքման օրից սկսած 2 տարվա ընթացքում պայմանագիրը դադարեցնելու դեպքում իրականացվում է Ավանդի տոկոսագումարների վերահաշվարկ ՀՀ դրամ 0.5%, ԱՄՆ դոլար 0.1% տարեկան տոկոսադրույքով:
- 1.2.8. 2 տարին լրանալուց հետո պահպանվում են մինչև վերջին կապիտալացումը (վճարումը) հաշվարկված տոկոսագումարները, իսկ կապիտալացումից (վճարումից) հետո ընկած ժամանակահատվածի համար կատարվում է տոկոսագումարների վերահաշվարկ ՀՀ դրամ 0.5%, ԱՄՆ դոլար 0.1% տարեկան տոկոսադրույքով:
- 1.2.9. Պայմանագրի կնքման օրվանից 2 տարի հետո և այնուհետև յուրաքանչյուր հաջորդ տարի Ավանդի տոկոսադրույքը վերանայվում է՝ հիմք ընդունելով վերանայման պահին Բանկում գործող «Դասական» Ավանդատեսակի 366 օր ժամկետի համար սահմանված համապատասխան արժույթի տոկոսադրույքը:

1.3. «Էվոկա Online» ավանդ

Նվազագույն գումար և արժույթ	Տոկոսների վճարման եղանակը	Ընդունման ժամկետներն ըստ օրերի քանակի						
		31 - 90 օր	91 - 180 օր	181 - 270 օր	271 - 365 օր	366 - 549 օր	550 - 730 օր	731 - 1825 օր
100,000 ՀՀ դրամ	Տոկոսները ժամկետի վերջում վճարմամբ	4.50 %	6.00 %	7.00 %	8.00 %	9.75 %	10.25 %	10.75 %
	Ամենամսյա տոկոսների վճարմամբ	4.00 %	5.50 %	6.50 %	7.50 %	9.25 %	9.75 %	10.25 %
	Տոկոսները եռամսյա վճարմամբ	-	5.50 %	6.50 %	7.50 %	9.25 %	9.75 %	10.25 %
200 ԱՄՆ դոլար	Տոկոսները ժամկետի վերջում վճարմամբ	0.75 %	2.00 %	2.50 %	3.00 %	4.25 %	4.75 %	5.25 %
	Ամենամսյա տոկոսների վճարմամբ	0.50 %	1.75 %	2.25 %	2.75 %	4.00 %	4.5 %	5.00 %
	Տոկոսները եռամսյա վճարմամբ	-	1.75 %	2.25 %	2.75 %	4.00 %	4.5 %	5.00 %
200 Եվրո	Տոկոսները ժամկետի վերջում վճարմամբ	0.35 %	1.00 %	1.50 %	1.75 %	2.25 %	2.75 %	3.25 %
	Ամենամսյա տոկոսների վճարմամբ	0.25 %	0.75 %	1.25 %	1.50 %	2.00 %	2.5 %	3.00 %
	Տոկոսները եռամսյա վճարմամբ	-	0.75 %	1.25 %	1.50 %	2.00 %	2.5%	3.00 %
30,000 ՌԴ Ռուբլի	Տոկոսները ժամկետի վերջում վճարմամբ	4.00 %	5.00 %	5.25 %	5.50 %	6.25 %	-	-
	Ամենամսյա տոկոսների վճարմամբ	3.75 %	4.75 %	5.00 %	5.25 %	6.00 %	-	-
	Տոկոսները եռամսյա վճարմամբ	-	4.75 %	5.00 %	5.25 %	6.00 %	-	-

- 1.3.1. Ավանդն ընդունվում է ֆիզիկական անձանցից՝ բացառապես «EvocaTouch» կամ «EvocaOnline» հեռակառավարման համակարգերի միջոցով:
- 1.3.2. Ավելացման հնարավորությամբ ավանդ ներդնելու դեպքում ՀՀ դրամով ավանդների համար սահմանվում է վերոհիշյալ սանդղակի տոկոսադրույքներից 0.5 %-ով պակաս տոկոսադրույք, իսկ ԱՄՆ դոլարով, Եվրոյով և ՌԴ ռուբլով ավանդների համար սահմանվում է վերոհիշյալ սանդղակի տոկոսադրույքներից 0.25 %-ով պակաս տոկոսադրույք: Տվյալ դեպքում ավանդի համալրումները իրականացվում են բացառապես «EvocaTouch» կամ «EvocaOnline» հեռակառավարման համակարգերի միջոցով: Ավանդատուն կարող է համալրել (ավելացնել) իր Ավանդի գումարը՝ սկսած նվազագույնը 40 000 ՀՀ դրամից, 100 ԱՄՆ դոլարից, 100 Եվրոյից կամ 10 000 ՌԴ ռուբլուց: Կատարված բոլոր համալրումների հանրագումարը չի կարող գերազանցել`
- 1.3.2.1. ՀՀ դրամի դեպքում Ավանդի ներդրման սկզբնական գումարի կրկնապատիկը,
- 1.3.2.2. ԱՄՆ դոլարի, Եվրոյի և ՌԴ ռուբլու դեպքում Ավանդի ներդրման սկզբնական գումարը:
- 1.3.3. Ավանդային պայմանագրի գործողության վերջին 3 (երեք) ամիսների ընթացքում Ավանդի գումարի համալրում չի թույլատրվում:
- 1.3.4. Ավանդի գումարի մասնակի նվազեցում չի թույլատրվում:
- 1.3.5. Ավանդատուի պահանջով ավանդային պայմանագիրը ժամկետից շուտ լուծելու դեպքում Բանկն իրականացնում է Ավանդի տոկոսագումարների վերահաշվարկ հետևյալ դրույքաչափերով`

Ավանդի արժույթ	Տարեկան տոկոսադրույք ըստ ժամկետների	
	Մինչև 365 օր	366 - 1095 օր
ՀՀ դրամ	0.50 %	8.50 %
ԱՄՆ դոլար	0.10 %	3.50 %
Եվրո	0.10 %	1.50 %
ՌԴ ռուբլի	0.10 %	5.00 %

2. Ավանդների ներգրավման պայմանները

- 2.1. Հեռակառավարման համակարգերի միջոցով ավանդ ներդնելու համար Հաճախորդը (ստորև նաև՝ Ավանդատու) պետք է նախապես հանդիսանա Բանկի հաշվետեր հաճախորդ և Բանկից ստացած լինի նշված համակարգեր մուտք գործելու գաղտնաբառերը:
- 2.2. Ավանդների ներդրումը, դրանց դիմաց հաշվեգրված տոկոսագումարների վճարումն Ավանդատուի ցանկությամբ կարող է կատարվել ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ եղանակով:
- 2.3. Ավանդ ներդնելու համար անհրաժեշտ է ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ և սոցիալական քարտ (նույնականացման քարտի առկայության դեպքում սոցիալական քարտ չի պահանջվում):
- 2.4. Բանկի գործունեության վայրում ավանդ ներդնելու նպատակով ֆիզիկական անձ Հաճախորդը լրացնում է հայտ-պայմանագիր, որում նշում է Ավանդի տեսակը, արժույթը, գումարը, ժամկետը, տոկոսագումարների վճարման ցանկալի պարբերականությունը և ստորագրությամբ հավաստում է տվյալ ավանդի ներգրավման պայմանների և սակագների վերաբերյալ իր համաձայն լինելու փաստը:
- 2.5. Բանկը, հաշվի առնելով Հաճախորդի կողմից ներկայացված տեղեկատվությունը և օրենսդրական պահանջները («Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք, «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտ» ԱՄՆ օրենք և այլն), կարող է Հաճախորդից պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, լրացնել այլ անհրաժեշտ ձևաթղթեր կամ հավաքագրել այլ պահանջվող տեղեկատվություն:
- 2.6. Ֆիզիկական անձանց ավանդները երաշխավորվում են համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի:
- 2.7. Ավանդի ներդրման համար Հաճախորդի համար բացվում է ավանդի արժույթով ընթացիկ հաշիվ, որի համար սպասարկման միջնորդավճար չի գանձվում: Բացված ընթացիկ հաշիվը Հաճախորդի կողմից պետք է օգտագործվի միայն տվյալ Ավանդի գծով գործարքների (համալրում, տոկոսների վճարում և այլն) կատարման համար:
- 2.8. Ավանդի գումարի վերադարձը կատարվում է ավանդային պայմանագրի վերջին օրը, իսկ եթե տվյալ օրը ոչ աշխատանքային է, ապա հաջորդ աշխատանքային օրը:
- 2.9. **Արտարժույթով ավանդների ներդրման դեպքում արտարժույթի փոխարժեքի տատանումների ռիսկը կրում է Հաճախորդը:**
- 2.10. Ավանդների հետ կապված կանխիկ գործառնությունների միջնորդավճարները, բացառությամբ ՌԴ ռուբլով ավանդների, սահմանվում են Բանկի «Սակագներով և դրույքներով» (TRM14-0002-02/1):
- 2.11. Կանխիկ եղանակով ներդրված ավանդները կանխիկ եղանակով վերադարձվելու դեպքում կանխիկացման միջնորդավճարներ չեն գանձվում:
- 2.12. Անկանխիկ եղանակով ներդրված ավանդները (այլ ֆինանսական հաստատություններից փոխանցված գումարներ) կանխիկ եղանակով վերադարձնելու դեպքում Բանկի կողմից կիրառվում են կանխիկացման միջնորդավճարներ՝ համաձայն տվյալ օրվա դրությամբ Բանկի սակագներով սահմանված դրույքաչափերի:
- 2.13. Կանխիկ ՌԴ ռուբլով ներդրված Ավանդը անկանխիկ ՌԴ ռուբլով վերադարձնելու դեպքում գանձվում է վերադարձման օրը կանխիկ ՌԴ ռուբլու մուտքագրման համար սահմանված միջնորդավճարը:

- 2.14. Մինչև ավանդային պայմանագրի ժամկետի լրանալը Հաճախորդը կարող է ավանդի երկարաձգման կամ նոր ժամկետով վերականգման իրավունքը լիազորել երրորդ անձի՝ Բանկի համապատասխան լիազոր ներկայացուցչի ներկայությամբ Բանկի տարածքում կազմված և ստորագրված լիազորագրի հիման վրա:
- 2.15. Ավանդատուն ավանդի և հաշվեգրված տոկոսների տնօրինման իրավունքը կարող է լիազորել այլ անձի՝ նոտարական կարգով վավերացված լիազորագրի, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նոտարի վավերացված լիազորագրին հավասարեցված լիազորագրի և օտարերկրյա պետություններում ՀՀ հյուպատոսական հիմնարկների ղեկավարների (հյուպատոսների) հաստատած լիազորագրի հիման վրա:
- 2.16. Եթե Ավանդատուն Ավանդի ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել Ավանդի գումարը և հաշվարկված տոկոսագումարները, ապա Բանկը Ավանդի գումարը և հաշվարկված տոկոսները փոխանցում է Ավանդատուի համար բացված ընթացիկ հաշվին կամ Ավանդատուի կողմից ավանդը ներդնելու ժամանակ հայտ-պայմանագրում այդ նպատակի համար նշված հաշվեհամարին:
- 2.17. Հաճախորդը կարող է ներդնել Ավանդ հոգուտ երրորդ անձի: Ընդ որում, երրորդ անձը կարող է լինել նաև անչափահաս անձ: Երրորդ անձը Ավանդատուի իրավունքներ ձեռք է բերում այդ իրավունքների վրա հիմնված առաջին իսկ պահանջը Բանկի սահմանած ձևանմուշով Բանկ ներկայացնելու պահից, ընդ որում, եթե երրորդ անձը անչափահաս է, ապա նշված պահանջը նա կարող է Բանկ ներկայացնել 18 (տասնութ) տարին լրանալուց հետո, իսկ մինչ այդ՝ նման իրավունքը վերապահված է անչափահաս անձի օրինական ներկայացուցիչներին: Ընդ որում ծնողներից միայն մեկի ներկայանալը բավարար է ավանդային հայտ պայմանագրով սահմանված գործողությունները կատարելու համար: Մինչև երրորդ անձի կողմից Ավանդատուի իրավունքների վրա հիմնված պահանջը Բանկ ներկայացնելը, Ավանդը տնօրինում է Ավանդը ներդնող անձը, ով ստորագրել է Հայտ-պայմանագիրը՝ համաձայն Հատ-պայմանագրով տրված հանձնարարականների և պայմանների:
- 2.18. Բանկը իրավունք ունի հոգուտ երրորդ անձի ավանդ ներդրվելու դեպքում Ավանդատուից պահանջել երրորդ անձի նույնականացման համար բավարար տեղեկատվության տրամադրում: Գործարքի օրինականության վերաբերյալ կասկածների կամ երրորդ անձին նույնականացնելու անհնարինության դեպքում Բանկն իրավունք ունի հրաժարվել հոգուտ երրորդ անձանց Ավանդի պայմանագիր կնքելուց:
- 2.19. Ավանդի գաղտնիությունը երաշխավորվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 2.20. Ավանդի պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել ՀՀ օրենսդրության համաձայն իրավասու մարմինների պահանջով Ավանդի գումարի վրա բռնագանձում տարածելու կամ այլ կերպ Ավանդի գումարն ավանդային հաշվից ելքագրելու Բանկի համար պարտադիր պահանջ ստացվելու դեպքերում:
- 2.21. Հեռակառավարման համակարգերի միջոցով ավանդի ներդրումն իրականացվում է Հաճախորդի ներկայացրած էլեկտրոնային Հայտի հիման վրա (նշվում է ավանդի տեսակը, ավանդի գումարը, ավանդի արժույթը, ժամկետը, տոկոսադրույքը, տոկոսների վճարման պարբերականությունը և ավանդի ներդրման այլ էական պայմաններ): Հաճախորդի ներկայացրած Ավանդի Հայտի հիման վրա Բանկը ձևակերպում է սահմանված ձևի ավանդային պայմանագիր, որը էլեկտրոնային եղանակով հաստատվում է Հաճախորդի կողմից: Ավանդի մուտքը հավաստող փաստաթուղթ է համարվում Ավանդատուի անձնական օգտագործման հեռակառավարման համակարգում արտացոլված մուտքը հավաստող տվյալները:

- 2.22. Հեռակառավարման համակարգերի միջոցով նույն գործառնական օրվա ընթացքում ներկայացված ավանդի ներդրման հայտը Բանկի կողմից ընդունվում է ի կատարման տվյալ գործառնական օրվա ընթացքում և պայմանագիրը համարվում է կողմերի միջև կնքված տվյալ օրը:
- 2.23. Գործառնական օրից դուրս ներկայացված էլեկտրոնային ավանդային հայտերի դեպքում ավանդային պայմանագիրը կնքված է համարվում հաջորդ գործառնական օրը:
- 2.24. Հեռակառավարման համակարգերի միջոցով Հաճախորդը կարող է ավանդ ներդնել միայն իր անունից: Հեռակառավարման համակարգերի միջոցով ձևակերպված ավանդների դեպքում Բանկը Հաճախորդին է ուղարկում ավանդի ձևակերպումը հաստատող, Բանկի կողմից սահմանված եղանակով հաղորդագրություն (SMS հաղորդագրություն, PUSH, E-mail և այլն) կամ ավանդի բացումը մերժելու մասին հաղորդագրություն:
- 2.25. Հաճախորդն իրավունք ունի Բանկի գործունեության վայրում թղթային ձևով ստանալ Հեռակառավարման համակարգերով ներդրված Ավանդի մուտքագրումը հավաստող փաստաթղթերի օրինակները, ինչպես նաև ավանդային հաշիվների քաղվածքները:

3. Ավանդների տոկոսագումարների հաշվարկման և վճարման կարգը

- 3.1. Ավանդի դիմաց տոկոսագումարների հաշվարկը կատարվում է դրա փաստացի մնացորդի նկատմամբ՝ օրական կտրվածքով: Ներդրված ավանդի յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկվում է սահմանված տոկոսադրույքի 1/365 հարաբերակցությամբ, իսկ նահանջ տարվա համար 1/366 հարաբերակցությամբ:
- 3.2. Տոկոսագումարները հաշվարկվում են ավանդը ներդնելու օրվանից սկսած մինչև ավանդը վերադարձնելու օրվան նախորդող օրը: Ավանդադրման օր է համարվում Ավանդատուի անվամբ բացված ավանդային հաշվին դրամական միջոցների փաստացի մուտքագրման օրը:
- 3.3. Ավանդների դիմաց հաշվեգրված տոկոսագումարները վճարվում են կանխիկ և անկանխիկ եղանակով: Եթե վճարման օրը հանդիսանում է ոչ աշխատանքային օր է, ապա վճարումը կատարվում է դրան հաջորդող աշխատանքային օրը:
- 3.4. Արտարժույթով ներդրված ավանդների դիմաց հաշվեգրված տոկոսագումարները ավանդատուի ցանկությամբ կարող են վճարվել ինչպես այն արտարժույթով, որով ներգրավվել է ավանդը, այնպես էլ ՀՀ դրամով՝ փոխարկման համար հիմք ընդունելով վճարման օրը տվյալ արտարժույթի համար Բանկի կողմից սահմանված անկանխիկ առքի փոխարժեքը:
- 3.5. Հաճախորդին (ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին) վճարվող տոկոսագումարները ենթակա են հարկման՝ համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի, ընդ որում Բանկը, հանդիսանալով հարկային գործակալ, համապատասխան եկամտային հարկի գումարները գանձում է Ավանդատուի հաշվեգրված և վճարման ենթակա տոկոսագումարներից:
- 3.6. Ավանդատուի պահանջով ավանդի գումարը ժամկետից շուտ վերադարձվելու դեպքում Բանկը կատարում է տոկոսների վերահաշվարկ: Ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսագումարները վճարվում են տվյալ պահին վերահաշվարկի համար Բանկի կողմից սահմանված տոկոսադրույքով և Ավանդի գումարից գանձվում է վճարված տոկոսագումարները, եթե Ավանդի տվյալ տեսակի համար Բանկի կողմից այլ պայմաններ նախատեսված չեն:

Ձեր հաշվին առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվում ենք ԱՆՎԱՆԱԿԱՆ տոկոսադրույթի հիման վրա, իսկ տարեկան ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանալիք դուք, եթե ձեր ավանդի դիմաց ստացված տոկոսագումարները վերաներդնեիք ավանդի տեսքով: Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման կարգին (Կանոնակարգ 8-02) կարող եք ծանոթանալ www.cba.am կայքում:

4. Ավանդային հաշվի վերաբերյալ տրամադրվող տեղեկատվություն

- 4.1. Պայմանագրի գործողության ընթացքում առնվազն երեսնօրյա պարբերականությամբ Բանկը Ավանդատուի կողմից նախընտրելի հաղորդակցման եղանակով վերջինիս կտրամադրի յուրաքանչյուր ավանդային հաշվի վերաբերյալ համապատասխան քաղվածք:
- 4.2. Այլ դեպքերում Ավանդատուի պահանջով Բանկը կտրամադրի քաղվածք, քաղվածքի կրկնօրինակ կամ այլ տեղեկատվության՝ համաձայն Բանկի կողմից սահմանված սակագների:

5. Երաշխավորված ավանդների չափերը

- 5.1. Ավանդի գումարի հատուցումը և հատուցման չափերը երաշխավորված են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով: Երաշխավորվող սահմանաչափերն են՝

Ավանդի արժույթային և կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավելի է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	16 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ	16 միլիոն ՀՀ դրամ(երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

Բանկում Հաճախորդի ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ, և բոլոր արտարժույթային ավանդները՝ մեկ ավանդ:

6. Ավանդատուներին անվճար տրամադրվող վճարային քարտեր

- 6.1. ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ավանդատուի ցանկության դեպքում Բանկը կարող է տրամադրել վճարային քարտ առանց տարեկան սպասարկման վճարի գանձման:
- 6.2. Տրամադրվող վճարային քարտի տեսակները, ըստ ներդրվող ավանդի գումարի սահմանվում է ստորև.

6.2.1. «Դասական», «Էվոկա Online» և «Մանկական» ավանդատեսակների դեպքում

Ավանդի արժույթ/Քարտի տեսակ	ArCa Classic/ Mastercard Standard/ Visa Classic	Mastercard Gold/ Evoca Travel/ Visa Platinum (ըստ հաճախորդի ընտրության)	VISA Infinite
ՀՀ դրամ	500,000 – 10,000,000 (ներառյալ)	10,000,000 – 40,000,000 (ներառյալ)	40,000,000 և ավել
ԱՄՆ դոլար	1,000 – 25,000 (ներառյալ)	25,000 – 100,000 (ներառյալ)	100,000 և ավել
Եվրո	1,000 – 20,000 (ներառյալ)	20,000 – 100,000 (ներառյալ)	100,000 և ավել
ՌԴ ռուբլի	60,000 – 3,000,000 (ներառյալ)	2,000,000 – 7,000,000 (ներառյալ)	7,000,000 և ավել

- 6.3. Քարտերը տրամադրվում են տվյալ քարտային պրոդուկտի համար հասանելի արժույթով ըստ հաճախորդի ցանկության:
- 6.4. Հաճախորդի ցանկությամբ վերջինիս ընտանիքի անդամներին (ծնողներ, ամուսին/կին, չափահաս երեխաներ) կարող է տրամադրվել նույն դասի քարտ 50% զեղչով՝ բացառությամբ VISA Infinite քարտի:
- 6.5. Մեկ ավանդի շրջանակներում տրամադրվում է մեկ անվճար քարտ ավանդատուի անունով: Ավանդատուի կողմից 1-ից ավել ավանդներ ներդնելու դեպքում յուրաքանչյուր ավանդը դիտարկվում է առանձին:
- 6.6. Ավանդի ժամկետը լրանալու կամ ավանդատուի կողմից Ավանդի պայմանագիրը ժամկետից շուտ դադարեցվելու դեպքում, Ավանդի ներդրման դիմաց տրամադրված վճարային քարտի սպասարկումը շարունակվում է իրականացվել առանց տարեկան սպասարկման վճարի գանձման, մինչև վճարային քարտի սպասարկման ժամկետի ավարտը, բացառությամբ Ավանդի ներդրման դիմաց տրամադրված VISA Infinite վճարային քարտերի:
- 6.7. VISA Infinite վճարային քարտի քարտապանների կողմից Ավանդի պայմանագիրը ժամկետից շուտ դադարեցվելու կամ Ավանդի ժամկետը լրանալու դեպքում Բանկն իրավունք ունի փակել նաև այդ Ավանդի ներդրման դիմաց տրամադրված VISA Infinite վճարային քարտը կամ հաճախորդի ցանկության դեպքում սկսել կիրառել տվյալ պահին Բանկում գործող սակագները և դրույքները:
- 6.8. Տրամադրվող հասանելի քարտի դասը որոշվում է քարտի բացման պահին ավանդի գումարի չափով: Ավանդի համալրման դեպքում, եթե հաճախորդը ցանկանում է ավելի բարձր դասի քարտ, ապա գործող քարտը պետք է փակվի և բացվի նոր ավելի բարձր դասի քարտ:
- 6.9. Քարտի վերաթողարկումը գործողության ժամկետը լրանալու կամ այլ պատճառով, իրականացվում է.
- 6.9.1. Անվճար, եթե հաճախորդի ավանդը գործում է, կամ եթե վերաթողարկման պահին հաճախորդի անունով գործում է համապատասխան սահմանաչափով այլ ավանդ, և որի շրջանակներում հաճախորդին արդեն չի տրամադրվել անվճար քարտ:
- 6.9.2. Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագներով, եթե ավանդի ժամկետը լրացել է և չի երկարաձգվել:
- 6.10. Քարտերի սպասարկման այլ սակագները և պայմանները՝ համաձայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագների և պայմանների:

7. Տոկոսագումարների հաշվարկման ներկայացուցչական օրինակներ

Տոկոսագումարների հաշվարկման բանաձևն է՝

$I = (P \times t / 365 \times r) - 10\%$ (եկամտային հարկ)

որտեղ՝

I՝ տոկոսագումար

P՝ ներդրված ավանդի գումար

r՝ տարեկան անվանական տոկոսադրույք

t՝ ավանդի ներդրման օրերի քանակ

Տոկոսագումարների հաշվարկման օրինակ՝

Ենթադրենք ներդրվել է ժամկետային ավանդ հետևյալ պայմաններով՝

Ներդրված ավանդի գումար՝ 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ

Ավանդի ներդրման ժամկետ՝ 1 տարի (365 օր)

Տարեկան անվանական տոկոսադրույք՝ 12 %

Տոկոսագումարների վճարումը՝ պայմանագրի ժամկետի վերջում

Ելնելով վերոհիշյալ բանաձևից և ներդրվող ավանդի պայմաններից՝ հաշվարկենք տարեկան տոկոսագումարների չափը՝

$I = (1\,000\,000 \times 364 / 365 \times 0.12) - 10\%$

Որտեղից՝

$I = 107\,704.11$ ՀՀ դրամ

*ավանդի ներդրման օրերի քանակից նվազեցված 1 օր՝ ավանդը վերադարձնելու օրը:

8. Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերության չափը

Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերության չափի հաշվարկման համար հիմք է ընդունվում ՀՀ ԿԲ «Բանկային ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկումը» Կանոնակարգ 8/02»-ով սահմանված հետևյալ բանաձևը՝

$APY = (1 + r/n)^n - 1,$

որտեղ՝ APY - տարեկան տոկոսային եկամտաբերությունն է.

r - տարեկան պարզ տոկոսադրույքն է.

ո - մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է:

Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման օրինակ՝ տոկոսագումարների կանոնավոր ամսական կապիտալիզմամբ:

Ենթադրենք ներդրվել է ժամկետային ավանդ հետևյալ պայմաններով՝

Ավանդի ներդրման ժամկետ՝ 1 տարի (365 օր)

Տարեկան անվանական տոկոսադրույք՝ 12%

Տոկոսների կապիտալացումների հաճախականություն՝ ամսական՝ տարվա ընթացքում 12 անգամ, յուրաքանչյուր ամսվա ժամանակահատվածի վերջում:

Ելնելով տոկոսային եկամտավերության հաշվարկման բանաձևից՝

$$APY=(1+0.12/12)^{12}-1$$

Որտեղից՝

$$APY=0.126825 \times 100 = 12.7\%$$

Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման օրինակ՝ տոկոսագումարների կապիտալացմամբ պայմանագրի վերջում

Ենթադրենք ներդրվել է ժամկետային ավանդ հետևյալ պայմաններով՝

Ավանդի ներդրման ժամկետ՝ 1 տարի (365 օր)

Տարեկան անվանական տոկոսադրույք՝ 12%

Տոկոսների կապիտալացումների հաճախականություն՝ պայմանագրի ժամկետի վերջում

Ելնելով վերոհիշյալ բանաձևից և ներդրվող ավանդի պայմաններից՝ հաշվարկենք տարեկան տոկոսային եկամտաբերության չափը՝

$$APY=(1+0.12/1)^{1}-1$$

Որտեղից՝

$$APY=0.12 \times 100 = 12\%$$

Բանկի կողմից առաջարկվող ավանդատեսակների տարեկան տոկոսային եկամտաբերության աղյուսակներ

Տարեկան տոկոսային եկամտաբերությանը ըստ ավանդատեսակների՝ հաշվարկված ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից սահմանված կարգով, կարող եք ծանոթանալ ստորև՝

ԱՏ-անվանական տոկոսադրույք

ԴԱՍԱԿԱՆ ԱՎԱՆԴԱՏԵՍԱԿԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Արժույթ	31-90 օր		91-180 օր		181-270 օր		271-365 օր		366-549 օր		550-730 օր		731-1825 օր	
	Անվանական %-դրույք	Տարեկան %-ային եկամտաբերություն	Անվանական %-դրույք	Տարեկան %-ային եկամտաբերություն	Անվանական %-դրույք	Տարեկան %-ային եկամտաբերություն	Անվանական %-դրույք	Տարեկան %-ային եկամտաբերություն	Անվանական %-դրույք	Տարեկան %-ային եկամտաբերություն	Անվանական %-դրույք	Տարեկան %-ային եկամտաբերություն	Անվանական %-դրույք	Տարեկան %-ային եկամտաբերություն
Տոկոսների ամսական վճարման դեպքում														
AMD	4.00%	4.07%	5.50%	5.64%	6.50%	6.70%	7.50%	7.76%	9.00%	9.38%	9.50%	9.92%	10.00%	10.47%
USD	0.50%	0.50%	1.75%	1.76%	2.25%	2.27%	2.75%	2.78%	3.75%	3.82%	4.25%	4.33%	4.75%	4.85%
EUR	0.25%	0.25%	0.75%	0.75%	1.25%	1.26%	1.50%	1.51%	1.75%	1.76%	2.25%	2.27%	2.75%	2.78%
RUR	3.75%	3.82%	4.75%	4.85%	5.00%	5.12%	5.25%	5.38%	5.75%	5.90%	-	-	-	-
Տոկոսների եռամսյակային վճարման դեպքում														
AMD	-	-	5.50%	5.61%	6.50%	6.66%	7.50%	7.71%	9.00%	9.31%	9.50%	9.84%	10.00%	10.38%
USD	-	-	1.75%	1.76%	2.25%	2.27%	2.75%	2.78%	3.75%	3.80%	4.25%	4.32%	4.75%	4.84%
EUR	-	-	0.75%	0.75%	1.25%	1.26%	1.50%	1.51%	1.75%	1.76%	2.25%	2.27%	2.75%	2.78%
RUR	-	-	4.75%	4.84%	5.00%	5.09%	5.25%	5.35%	5.75%	5.87%	-	-	-	-
Տոկոսների տարեկան կամ ժամկետի վերջում վճարելու դեպքում														
AMD	4.50%	4.50%	6.00%	6.00%	7.00%	7.00%	8.00%	8.00%	9.50%	9.50%	10.00%	10.00%	10.50%	10.50%
USD	0.75%	0.75%	2.00%	2.00%	2.50%	2.50%	3.00%	3.00%	4.00%	4.00%	4.50%	4.50%	5.00%	5.00%
EUR	0.35%	0.35%	1.00%	1.00%	1.50%	1.50%	1.75%	1.75%	2.00%	2.00%	2.50%	2.50%	3.00%	3.00%
RUR	4.00%	4.00%	5.00%	5.00%	5.25%	5.25%	5.50%	5.50%	6.00%	6.00%	-	-	-	-

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՎԱՆԴԱՏԵՍԱԿԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ		
Արժույթ	Անվանական %-դրույք	Տարեկան %- ային եկամտաբերույթ յուն
AMD	9.50%	9.50%
USD	4.50%	4.50%

ԷՎՈԿԱ ONLINE ԱՎԱՆԴԱՏԵՍԱԿԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Արժույթ	31-90 օր		91-180 օր		181-270 օր		271-365 օր		366-549 օր		550-730 օր		731-1825 օր	
	Անվանական % - դրույք	Տարեկան % - ային եկամտաբերություն	Անվանական % - դրույք	Տարեկան % - ային եկամտաբերություն	Անվանական % - դրույք	Տարեկան % - ային եկամտաբերություն	Անվանական % - դրույք	Տարեկան % - ային եկամտաբերություն	Անվանական % - դրույք	Տարեկան % - ային եկամտաբերություն	Անվանական % - դրույք	Տարեկան % - ային եկամտաբերություն	Անվանական % - դրույք	Տարեկան % - ային եկամտաբերություն
Տոկոսների ամսական վճարման դեպքում														
AMD	4.00%	4.07%	5.50%	5.64%	6.50%	6.70%	7.50%	7.76%	9.25%	9.65%	9.75%	10.20%	10.25%	10.74%
USD	0.50%	0.50%	1.75%	1.76%	2.25%	2.27%	2.75%	2.78%	4.00%	4.07%	4.50%	4.59%	5.00%	5.12%
EUR	0.25%	0.25%	0.75%	0.75%	1.25%	1.26%	1.50%	1.51%	2.00%	2.02%	2.50%	2.53%	3.00%	3.04%
RUR	3.75%	3.82%	4.75%	4.85%	5.00%	5.12%	5.25%	5.38%	6.00%	6.17%	-	-	-	-
Տոկոսների եռամսյակային վճարման դեպքում														
AMD	-	-	5.50%	5.61%	6.50%	6.66%	7.50%	7.71%	9.25%	9.57%	9.75%	10.11%	10.25%	10.65%
USD	-	-	1.75%	1.76%	2.25%	2.27%	2.75%	2.78%	4.00%	4.06%	4.50%	4.58%	5.00%	5.09%
EUR	-	-	0.75%	0.75%	1.25%	1.26%	1.50%	1.51%	2.00%	2.02%	2.50%	2.52%	3.00%	3.03%
RUR	-	-	4.75%	4.84%	5.00%	5.09%	5.25%	5.35%	6.00%	6.14%	-	-	-	-
Տոկոսների տարեկան կամ ժամկետի վերջում վճարելու դեպքում														
AMD	4.50%	4.50%	6.00%	6.00%	7.00%	7.00%	8.00%	8.00%	9.75%	9.75%	10.25%	10.25%	10.75%	10.75%
USD	0.75%	0.75%	2.00%	2.00%	2.50%	2.50%	3.00%	3.00%	4.25%	4.25%	4.75%	4.75%	5.25%	5.25%
EUR	0.35%	0.35%	1.00%	1.00%	1.50%	1.50%	1.75%	1.75%	2.25%	2.25%	2.75%	2.75%	3.25%	3.25%
RUR	4.00%	4.00%	5.00%	5.00%	5.25%	5.25%	5.50%	5.50%	6.25%	6.25%	-	-	-	-